ԵԴ1/0425/01/24
(ՀԿԴ/0236/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 մարտի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 24-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Հայկ Աշոտի Լալայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արման Սեյրանի Օհանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին

մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արծրունի Սամվելի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Դավիթ Հրանտի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Նժդեհ Պողոսի Թաշճեանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Մուշեղ Սամվելի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, Վարդևան Գրիգորի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Ժաննա Հմայակի Նիկողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Սերյոժա Գարեգինի Թումանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Տիգրան Արսենի Ղամբարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով թիվ 69132323 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0236/01/23 քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի նոյեմբերի 10-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարին 27-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 11-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 18-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ Հայկ Աշոտի Լալայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2022թթ. մասնակցել է Դավիթ Քելեշյանի կողմից 2019 թվականին ստեղծված և մինչ օրս ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք, այդ թվում՝ Գեղամ Գևորգյանը, Արման Օհանյանը, Արծրունի Մկրտչյանը, Դավիթ Մինասյանը և Նժդեհ Թաշճեանը:*

Դավիթ Քելեշյանի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով:

Այսպես.

Դավիթ Քելեշյանն, իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու նպատակով «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում հանդես գալով «David Van Hoktemberyan» անվամբ, ստեղծել և կառավարել է «Kanachu Shuka» և նույնանուն այլ հարթակներ, որոնցում ներգրավել է տարբեր անուններով գրանցված և թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվող տասնյակ խանութ-հարթակներ՝ սահմանելով վերջիններիս գործունեության հստակ կանոններ, թմրամիջոցների վաճառքի կարգը և գները, ինչպես նաև դրանց չհետևելու արդյունքում նշված հարթակների կառավարիչների նկատմամբ կիրառվող անբարենպաստ հետևանքները: Տևական ժամանակ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու համար Դավիթ Քելեշյանը հանցակիցների համախմբմամբ 2019 թվականին ստեղծել և մինչ օրս ղեկավարում է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպություն, դրանում ներառել է բազմաթիվ անձանց՝ հստակ սահմանելով կազմակերպության մասնակիցներից յուրաքանչյուրի դերակատարումը: Մասնավորապես, թմրամիջոցի ապօրինի աճեցման, պատրաստման, պահելու, փոխադրելու, իրացնելու և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գումարների հանցավոր ծագումը թաքցնելու, դրանք շրջանառելու և կանխիկացնելու նպատակով հանցավոր կազմակերպության կազմում որպես մասնակիցներ ընդգրկվել են Հայկ Լալայանը, Արծրունի Մկրտչյանը, Արման Օհանյանը, Դավիթ Մինասյանը, Նժդեհ Թաշճեանը, Գեղամ Գևորգյանը և այլ անձինք: Նշված անձանցից Հայկ Լալայանը, մասնակցելով հանցավոր կազմակերպությանը, հանցակիցներին տրամադրել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի աճեցման համար անհրաժեշտ պարագաներ և խորհրդատվություն: Հայկ Լալայանը Դավիթ Քելեշյանի հանձնարարությամբ կազմակերպության մասնակիցներ Արման Օհանյանին, Արծրունի Մկրտչյանին, Դավիթ Մինասյանին և չպարզված այլ անձանց, սկզբում Երևան քաղաքի Էրեբունի թաղամասում, այնուհետև՝ Ձրվեժ թաղամասում գործող իրեն պատկանող «IGrow» խանութներից տրամադրել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց աճեցնելու և պատրաստելու համար անհրաժեշտ լուսային սարքավորումներ, ջերմամեկուսիչ նյութեր,

անհրաժեշտ պարարտանյութով հող, կանեփի բույսի սերմեր ու սածիլներ, ինչպես նաև կազմակերպության անդամների խնդրանքով տվել է բույսերի աճեցման համար անհրաժեշտ խորհուրդներ: Բացի այդ, Հայկ Լալայանը հանցավոր կազմակերպության կողմից տելեգրամյան «Kanachu Shuka» անվամբ հարթակի միջոցով ապօրինի իրացված թմրամիջոցների վաճառքի արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերի գումարների հանցավոր ծագումը թաքցնելու և քողարկելու նպատակով <<Բինանս>> հարթակում գրանցել և իր անվամբ նույնականացրել է 118662737 համարի դրամապանակը, որին 12.04.2021 թվականից մինչ 22.06.2022 թվականն ընկած ժամանակահատվածում տարատեսակ կրիպտոարժույթային հաշիվներից ստացել է 779.125 ԱՄՆ դոլարին համարժեք 376.613.442 ՀՀ դրամ գումար:

Հայկ Լալայանին պատկանող «IGrow» խանութում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել են բույսերի աճեցման և մշակման համար նախատեսված հողեր, ֆիլտրեր, լույսեր, պարարտանյութեր, հողի ջերմաչափեր, օդափոխության համակարգեր և այլ պարագաներ:

Հանցավոր կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանի կատարած դերաբաշխմանը համապատասխան՝ վերջինիս ազգական Արծրունի Մկրտչյանը և նախկին համածառայակից Արման Օհանյանը, մասնակցելով հանցավոր կազմակերպությանը, 2020-2022թթ. ընթացքում զբաղվել են Դավիթ Քելեշյանի կողմից կառավարվող «Kanachu Shuka» հարթակի միջոցով իրացնելու համար թմրամիջոցների աճեցմամբ, տեղափոխմամբ և տեղադրմամբ: Արծրունի Մկրտչյանը և Արման Օհանյանը Դավիթ Քելեշյանի հանձնարարությամբ Հայկ Լալայանից ստացել են թմրամիջոցի աճեցման համար անհրաժեշտ պարագաներ, մասնավորապես՝ լուսային սարքավորումներ, ջերմամեկուսիչ նյութեր, անհրաժեշտ պարարտանյութով հող, սերմեր, որոնք տեղափոխել են Դավիթ Քելեշյանին փաստացի պատկանող և նրա մոր անունով գրանցված Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի 1-ին փողոցի թիվ 18 տուն: Վերջիններս նշված տան սենյակներից մեկը հարմարեցրել են որպես «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի աճեցման համար նախատեսված ջերմոց՝ կազմակերպելով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի բույսի աճեցումը: Արծրունի Մկրտչյանը և Արման Օհանյանն

իրենց կողմից աճեցված թմրամիջոցները չորացրել են, բաժանել տարբեր քաշերի, փաթեթավորել և որպես «Kanachu Shuka» հարթակի միջոցով վաճառքի ենթակա պատրաստի թմրամիջոցներ՝ տեղադրել տարբեր վայրերում՝ դրանց կոորդինատներն ուղարկելով Դավիթ Քելեշյանին: Վերջիններս նշված եղանակով պատրաստել և իրացրել են շուրջ 8կգ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց: Վահագնաձոր գյուղի 1-ին փողոցի թիվ 18 տանը կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է հանցավոր կազմակերպության կողմից ապօրինի իրացման համար նախատեսված հերթական խմբաքանակը՝ տարբեր չափերի փաթեթներում առանձնացված՝ ընդհանուր 365,2 գրամ քաշով «մարիխուանա» և 20,71 գրամ «հաշիշ» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաև դեռևս աճեցման փուլում գտնվող կանեփի բույսեր, իսկ Արման Օհանյանի կողմից շահագործվող «Պաջերո» մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել են բույսեր աճեցնելու համար նախատեսված բազմաթիվ պարագաներ և պարարտանյութեր:

Արծրունի Մկրտչյանը և Արման Օհանյանը հանցավոր կազմակերպության կողմից իրացնելու համար աճեցված և տեղադրված թմրամիջոցների ապօրինի իրացումից ստացված իրենց մասնաբաժինը պարբերաբար առձեռն ստացել են հանցավոր կազմակերպության մասնակից, կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող Գեղամ Գևորգյանից:

Հանցավոր կազմակերպության մասնակից Դավիթ Մինասյանը, տևական ժամանակ համացանցի միջոցով հետևելով «David Van Hoktemberyan» և «Kanachu Shuka» հարթակներին, տեղեկացել է, որ դրանք ստեղծվել և կառավարվել են Դավիթ Քելեշյանի կողմից, ում հետ կապ հաստատելով՝ ստացել է նրա համաձայնությունն իր կողմից կառավարվող տելեգրամյան «BOB Marley» խանութ-հարթակի միջոցով «Kanachu Shuka» հարթակում թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու վերաբերյալ, որից հետո Դավիթ Մինասյանը 2019-2022թթ. ընթացքում շուրջ 10 անգամ Դավիթ Քելեշյանի կողմից նշված վայրերից վերցրել է ընդհանուր ավելի քան 2 կգ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, այն իր հերթին բաժանել է ավելի փոքր մասերի, փաթեթավորել և տեղադրել տարբեր թաքստոցներում, որից հետո իր կողմից կառավարվող խանութ-հարթակի միջոցով իրացրել դրանք, իսկ արդյունքում ստացված գումարներից կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանի

հասանելիք մասնաբաժինը վերածել է կրիպտոարժույթի և փոխանցել վերջինիս կողմից նշված կրիպտոարժույթային դրամապանակներին:

Բացի այդ, Դավիթ Մինասյանը կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանի համաձայնությամբ զբաղվել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի աճեցմամբ, որի համար անհրաժեշտ պարագաները ստացել է հանցավոր կազմակերպության մասնակից Հայկ Լալայանից, իսկ աճեցված թմրամիջոցների իրացման արդյունքում ստացված գումարները կազմակերպության ղեկավարի կողմից նրան են փոխանցվել նույն կազմակերպության մասնակից Գեղամ Գևորգյանին պատկանող կրիպտոարժույթի փոխանակման կետի միջոցով:

Հանցավոր կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանի կողմից սահմանված գործունեության կանոնները խախտելու և թմրամիջոցների իրացման արդյունքում ստացված գումարների մի մասը ժամանակին չվճարելու պատճառով Դավիթ Մինասյանը հեռացվել է «Kanachu Shuka» հարթակից:

Դավիթ Մինասյանի բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվել է 58,6 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց և կանեփի բույսի կանաբինոիդներից հեղքերով կշեռք:

Գեղամ Գևորգյանը, զբաղվելով կրիպտոարժույթի փոխանակմամբ և տեղյակ լինելով, որ Դավիթ Քելեշյանը նրա կողմից ստեղծված և կառավարվող «David Van Hoktemberyan» և «Kanachu Shuka» հարթակների միջոցով բազմաթիվ անձանց ներգրավմամբ զբաղվել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի աճեցմամբ և իրացմամբ, վերջինիս առաջարկով ներգրավվել է հանցավոր կազմակերպության գործունեությանը և 2019-2022թթ. ընթացքում պարբերաբար կրիպտոարժույթի միջոցով ստացել է նշված հարթակների կողմից իրացված թմրամիջոցների գումարները, դրանք շրջանառել, փոխարկել և կանխիկ գումարով կամ վճարային գործիքներին կատարված փոխանցումներով տրամադրել է հանցավոր կազմակերպության անդամներին, այդ թվում՝ Հայկ Լալայանին, Արման Օհանյանին կամ Դավիթ Քելեշյանի կողմից նշված այլ անձանց: Գեղամ Գևորգյանը, հանցավոր կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանից տեղեկանալով, որ Հայկ Լալայանը հանդիսանում է նշված կազմակերպության մասնակից և նրա համար «կարևոր» անձ, վերջինիցս պարբերաբար ստացել է առանձնապես խոշոր չափերով

կրիպտոարժույթ, որը փոխարկել և կանխիկ գումարով կամ փոխանցումով տրամադրել է նրան: Գեղամ Գևորգյանը Հայկ Լալայանի հետ հանդիպումների և նրան գումարներ փոխանցելու ընթացքում վերջինիցս տեղեկացել է, որ նա ևս զբաղվում է «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի աճեցմամբ:

2021 թվականի աշնանը Նժդեհ Թաշճեանը «Տելեգրամ» հավելվածում տեսել է 2000-ից ավել մասնակից ունեցող «Kanachu Shuka» հարթակը, որտեղ գրանցված են եղել թմրամիջոցների իրացմամբ զբաղվող շուրջ 50 խանութ-հարթակներ: Նժդեհ Թաշճեանը, նկատելով «Kanachu Shuka» հարթակում տեղադրված հայտարարությունն այն մասին, որ նշված հարթակում աշխատանքի անցնելու նպատակով պահանջվել են թմրամիջոց տեղադրողներ, կապ է հաստատել նշված հարթակը կառավարող տելեգրամյան «David Van Hoktemberyan» անունով գրանցված օգտատիրոջ հետ և վերջինիս հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ներգրավվել է հանցավոր կազմակերպության մեջ: «David Van Hoktemberyan» անունով գրանցված օգտատերը Նժդեհ Թաշճեանին հայտնել է, որ աշխատանքի անցնելու համար անհրաժեշտ է որպես դեպոզիտ «դաշքոին» տեսակի կրիպտոարժույթի միջոցով վճարել 200 ԱՄՆ դոլար՝ ներկայացնելով դրա փոխանցման կարգը: Նշված պահանջը կատարելուց հետո վերջինս Նժդեհ Թաշճեանին ուղարկել է օտարերկրյա հեռախոսահամար՝ հրահանգելով դրա միջոցով «Տելեգրամ» հավելվածում գրանցել թմրամիջոցների վաճառքով զբաղվելու համար նախատեսված հարթակ՝ նրան տալով «Թոմ և Ջերի» անունը: Նժդեհ Թաշճեանը նշված հարթակի միջոցով իրացնելու նպատակով «David Van Hoktemberyan» հարթակի օգտատիրոջից ստացել է թմրամիջոցների թաքստոցների գտնվելու վայրերի վերաբերյալ տեղեկություններ, որոնք փոխանցել է «Տելեգրամ» հավելվածում «Միկա» անունով գրանցված Մուշեղ Պողոսյանին: Վերջինս իր հանցակիցներ Ժաննա Նիկողոսյանի և Վարդևան Գրիգորյանի հետ վերցրել են Նժդեհ Թաշճեանի կողմից տրամադրված թմրամիջոցները, դրանք ըստ տրված հրահանգների՝ տեղադրել Երևան քաղաքի տարբեր հատվածներում գտնվող թաքստոցներում և տեղադրված փաթեթների կոորդինատներն ուղարկել Նժդեհ Թաշճեանին, իսկ վերջինս էլ դրանք ուղարկել է «David Van Hoktemberyan» հարթակի օգտատիրոջը, ով ամեն տեղադրված փաթեթի համար փոխանցել է 3 ԱՄՆ դոլար:

Ժաննա Նիկողոսյանի կողմից ներկայացված փաթեթներում հայտնաբերվել է ընդհանուր 2,53 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Գործով պարզված հիշյալ անձանցից բացի, Դավիթ Քելեշյանի կողմից հանցավոր կազմակերպության մեջ ներգրավվել են նաև դեռևս չպարզված բազմաթիվ այլ անձինք, ովքեր զբաղվել են նրա կողմից ստեղծված և կառավարվող հարթակներում գրանցված և թմրամիջոցների իրացմամբ զբաղվող տասնյակ խանութ-հարթակների գործունեության իրականացմամբ:

«David Van Hoktemberyan» և «Kanachu Shuka» հարթակների միջոցով հանցավոր կազմակերպության կողմից իրացման ենթակա թմրամիջոցներից 16 փաթեթներով ընդհանուր 7,36 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց է հայտնաբերվել նշված հարթակների համար որպես տեղադրող աշխատած Սերյոժա Թումանյանի և Տիգրան Ղամբարյանի անձնական խուզարկությամբ, ինչպես նաև վերջիններիս կողմից արդեն իսկ տեղադրված վայրերից, 1,92 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց է հայտնաբերվել «Kanachu Shuka» հարթակից այն ձեռք բերած Մուշեղ Աղեկյանի անձնական խուզարկությամբ, ընդհանուր 7,14 գրամ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց է հայտնաբերվել Մուշեղ Պողոսյանի անձնական խուզարկությամբ և նրա կողմից տեղադրված վայրից;

Բացի այդ, «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածի «David Van Hoktemberyan» և «Kanachu Shuka» անվամբ հարթակների միջոցով թմրամիջոցների իրացումից ստացված առանձնապես խոշոր չափերով ֆինանսական միջոցների՝ առնվազն 1.083.619.048,52 ՀՀ դրամին համարժեք 2.241.754 ԱՄՆ դոլար գումարի հանցավոր ծագումը, իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության ղեկավար Դավիթ Քելեշյանը, համաձայնության գալով կազմակերպության մասնակիցներ՝ կրիպտոարժույթների փոխանակմամբ զբաղվող Գեղամ Գևորգյանի և «IGrow» խանութի հիմնադիր Հայկ Լալայանի, ինչպես նաև մյուս հանցակիցների հետ, թմրամիջոցներ ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց գումարի փոխանցման նպատակով տրամադրել է պարբերաբար փոփոխվող տարատեսակ բազմաթիվ կրիպտոարժույթային դրամապանակների տվյալներ, որից հետո նշված

դրամապանակներին ստացված միջոցների մի մասը փոխանցվել է ՀՀ տարածքում գործող և «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածի միջոցով կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող Գեղամ Գևորգյանի և այլ անձանց կրիպտոարժույթային հաշիվներին, այնուհետև փոխարկման արդյունքում համարժեք դրամական միջոցները վճարային գործիքների փոխանցելու միջոցով կամ առձեռն՝ կանխիկ եղանակով, փասպացի հանձնվել են հանցավոր կազմակերպության մասնակիցներ Հայկ Լալայանին, Արման Օհանյանին, Արծրունի Մկրտչյանին, Նժդեհ Թաշճեանին, Դավիթ Մինասյանին և այլ անձանց:

«Kanachu Shuka» և «David Van Hoktemberyan» անվանմամբ տելեգրամյան խանութ-հարթակների գործունեության ընթացքում թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց իրացվող թմրամիջոցի դիմաց գումարի փոխանցման նպատակով պարբերաբար փոփոխվող դրամապանակների շարքում գնորդ հանդիսացող և «Տելեգրամ» հավելվածում «Энлиль» անվամբ հանդես եկող Գոո Նալբանդյանին Դավիթ Քելեշյանի կողմից թմրամիջոցի գնման համար վճարում կատարելու նպատակով տրամադրվել է Xm1ecNk4MQFt8a2wun7dGNCxHYZ2hkz43K համարի «դաշքոին» տեսակի կրիպտոարժույթային հաշիվը, որին վերջինս բազմաթիվ անգամներ կատարել է փոխանցումներ: Դավիթ Քելեշյանին պատկանող վերը նշված դրամապանակին 2021-2022 թվականների ընթացքում ընդհանուր 2505 փոխանցումներով մուտքագրվել է 1,237,866.99 ԱՄՆ դոլարին համարժեք 8,989.65674021 «դաշքոին» տեսակի կրիպտոարժույթ: Այնուհետև, ստացված միջոցների մի մասը, անցնելով այլ դրամապանակներով և միախառնվելով դրանցում առկա այլ միջոցների հետ, վերջնարդյունքում ստացվել են տարբեր անձանց անուններով նույնականացված կրիպտոարժույթային XaiQvSQkktTcC4wZBFYUrPYTptSBVQordf, kALcS1Mappn6QUMgsbacFSwwFWw7YbwXY, kkoWJwDpZnMQHbweeiT4V7sQ26iG7SQ57 XwnATxiJHudEkuxUR1ntBxcHzYb6fRQZzV դրամապանակներին և Հայկ Լալայանի անվամբ «Բինանս» համակարգում գործող թիվ 118662737 հաշվի հետ նույնականացված «դաշքոին» տեսակի XaiQvSQkktTcC4wZBFYUrPYTptSBVQordf համարի դրամապանակին, իսկ 9 փոխանցումներով ընդհանուր 10.591 ԱՄՆ դոլար գումարին համարժեք կրիպտոարժույթ է փոխանցվել Գեղամ Գևորգյանի կողմից

օգտագործվող կրիպտոարժույթային հաշիվներին: Բացի այդ, Դավիթ Քելեշյանի կողմից Գեղամ Գևորգյանին պատկանող կրիպտոարժույթային հաշիվներին գումարներ են փոխանցվել տասնյակ այլ «Dash» և «USDT» տեսակի կրիպտոարժույթային հաշիվներից, որոնց միջոցով կատարված գումարային ընհանուր շրջանառությունը կազմել է 404.763 ԱՄՆ դոլար: Նշված դրամապանակներից է հանդիսացել նաև TQ3Xm2Tz5hKjpN9qCm2R4W6gouX4qFXURu համարի դրամապանակը, որից Դավիթ Քելեշյանը 36 փոխանցումներով ընդհանուրը 154.040 ԱՄՆ դոլար գումարին համարժեք կրիպտոարժույթ է փոխանցել կազմակերպության մասնակից Գեղամ Գևորգյանի կնոջ՝ Արփի Ավետիսյանի անվամբ «Բինանս» համակարգում գրանցված 43211082 համարի դրամապանակի հետ նույնականացված TL4tgLVbjmk5a7poaugLj5Unk69H3EaC8H համարի «USDT» տեսակի դրամապանակին, որը Գեղամ Գևորգյանի կողմից կանխիկ կամ փոխանցման եղանակով տրամադրվել է հանցավոր կազմակերպության մասնակիցներին: Նշված դրամապանակից Դավիթ Քելեշյանն ի թիվս այլ հաշիվների գումարներ է փոխանցել նաև Հայկ Լալայանի անվամբ «Բինանս» համակարգում գործող 118662737 հաշվի հետ նույնականացված TNzkV4HVSdbG9hcxfZa1w4kNm49yfqZkJD համարի կրիպտոարժույթային դրամապանակին: Բացի այդ, Հայկ Լալայանի կողմից «Բինանս» համակարգում բացված 118662737 հաշվի գործունեության ամբողջ ընթացքում՝ 12.04.2021թ. մինչև 22.06.2022թ. տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակներից մուտքագրվել է ընդհանուր 779.125 ԱՄՆ դոլարին համարժեք կրիպտոարժույթ, որից 703.094 ԱՄՆ դոլար գումարը վերջինս «USDT» տեսակի կրիպտոարժույթի միջոցով փոխանցել է Գեղամ Գևորգյանին պատկանող «Բինանս» համակարգի 43211082 համարի դրամապանակին, որը հետագայում վերջինիս կողմից կանխիկացվել և առձեռն տրամադրվել է Հայկ Լալայանին (…)»[1]:

4.1. 2023 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ Արման Սեյրանի Օհանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 200-208:

հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2022թթ. մասնակցել է Դավիթ Քելեշյանի կողմից 2019 թվականին ստեղծված և մինչ օրս ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք, այդ թվում՝ Հայկ Լալայանը, Գեղամ Գևորգյանը, Արծրունի Մկրտչյանը, Դավիթ Մինասյանը և Նժդեհ Թաշճեանը:*

Դավիթ Քելեշյանի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժ ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով (…)»[2]:

4.2. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Արծրունի Սամվելի Մկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 153-161:

մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2022թթ. մասնակցել է Դավիթ Քելեշյանի կողմից 2019 թվականին ստեղծված և մինչ օրս ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք, այդ թվում՝ Հայկ Լալայանը, Գեղամ Գևորգյանը, Արման Օհանյանը, Դավիթ Մինասյանը և Նժդեհ Թաշճեանը:

Դավիթ Քելեշյանի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով (…)»[3]:

4.3. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Դավիթ Հրանտի Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու*

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 162-170:

նպատակով 2019-2022թթ. մասնակցել է Դավիթ Քելեշյանի կողմից 2019 թվականին ստեղծված և մինչ օրս ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք, այդ թվում՝ Հայկ Լալայանը, Գեղամ Գևորգյանը, Արծրունի Մկրտչյանը, Արման Օհանյանը և Նժդեհ Թաշճեանը:

Դավիթ Քելեշյանի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով (…)»[4]*:*

4.4. 2023 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ Նժդեհ Պողոսի Թաշճեանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2021-2022թթ. մասնակցել է Դավիթ Քելեշյանի կողմից 2019 թվականին ստեղծված և մինչ օրս ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով*

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 147-155:

փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք, այդ թվում՝ Հայկ Լալայանը, Գեղամ Գևորգյանը, Արման Օհանյանը, Արծրունի Մկրտչյանը և Դավիթ Մինասյանը:

Դավիթ Քելեշյանի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 ՀՀ դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով (…)»[5]:

4.5. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Մուշեղ Սամվելի Պողոսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով տելեգրամյան «Kanachu Shuka» և «Թոմ և Ջերի» հարթակները կառավարող անձանց հետ վարված նամակագրությամբ համաձայնություն է ձեռք բերել «Թոմ և Ջերի» էջի միջոցով թմրամիջոցների ապօրինի իրացմանը անմիջականորեն մասնակցելու վերաբերյալ, որից հետո, նախնական համաձայնության գալով հանցակիցներ Վարդևան Գրիգորյանի և Ժաննա Նիկողոսյանի հետ, 2021-2022թթ. իրացման նպատակով ձեռք*

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 170-178:

է բերել, տեղափոխել և Երևան քաղաքի տարածքում տեղադրել «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, Մուշեղ Պողոսյանը շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով ձեռք է բերել, պահել, փոխադրել և ուսումնական հաստատություն հանդիսացող Երևան քաղաքի թիվ 132 դպրոցի հարակից տարածքում տեղադրել զգալի չափերով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, Մուշեղ Պողոսյանը 2021 թվականի աշնանը շանտաժի միջոցով Մերի Գերյանին հարկադրել է սեռական հարաբերության՝ նշված ժամանակահատվածում մի քանի անգամ նրա հետ ունենալով սեռական հարաբերություն (…)»[6]:

4.6. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Վարդևան Գրիգորի Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ «*նա տեղեկանալով Մուշեղ Պողոսյանի կողմից «Տելեգրամ» հեռահաղորդակցության հավելվածի միջոցով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու մասին, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, Մուշեղ Պողոսյանի հետ նախնական համաձայնությամբ խմբի կազմում 2021-2022թթ. իրացման նպատակով ձեռք է բերել, տեղափոխել և Երևան քաղաքի տարածքում տեղադրել «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ բազմաթիվ փաթեթներ:*

Բացի այդ, Վարդևան Գրիգորյանը Մերի Գերյանի մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով 2021 թվականի աշնանը շորթմամբ վերջինից պահանջել է 237.500 ՀՀ դրամին համարժեք 500 ԱՄՆ դոլար գումար (…)»[7]:

---

[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 144-146:
[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 96-98:

4.7. 2023 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Ժաննա Հմայակի Նիկողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ «*նա տեղեկանալով Մուշեղ Պողոսյանի կողմից «Տելեգրամ» հեռահաղորդակցության հավելվածի միջոցով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու մասին, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, Մուշեղ Պողոսյանի հետ նախնական համաձայնությամբ խմբի կազմում 2021-2022թթ. իրացման նպատակով ձեռք է բերել, տեղափոխել և Երևան քաղաքի տարածքում տեղադրել «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ բազմաթիվ փաթեթներ (…)»*[8]:

4.8. 2023 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Սերյոժա Գարեգինի Թումանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով նախնական համաձայնության գալով հանցակից Տիգրան Ղամբարյանի հետ՝ տելեգրամյան «Kanachu Shuka» հարթակի օգտատիրոջ հետ համաձայնություն են ձեռք բերել թմրամիջոցների ապօրինի իրացմանն անմիջականորեն մասնակցելու վերաբերյալ, որից հետո, 2021 թվականի մայիսին իրացման նպատակով ձեռք են բերել, տեղափոխել և Երևան քաղաքի տարածքում տեղադրել զգալի չափերով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց (…)»*[9]:

---

[8] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 126-127:
[9] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 208-209:

4.9. 2023 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Տիգրան Արսենի Ղամբարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ «*նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով նախնական համաձայնության գալով հանցակից Սերյոժա Թումանյանի հետ՝ տելեգրամյան «Kanachu Shuka» հարթակի օգտատիրոջ հետ համաձայնություն են ձեռք բերել թմրամիջոցների ապօրինի իրացմանն անմիջականորեն մասնակցելու վերաբերյալ, որից հետո, 2021 թվականի մայիսին իրացման նպատակով ձեռք են բերել, տեղափոխել և Երևան քաղաքի տարածքում տեղադրել զգալի չափերով «մարիխուանա» տեսակի թմրամիջոց (…)»*[10]:

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարին 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «*(…) [Հ]աշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայկ Լալայանին, Արման Օհանյանին, Արծրուն Մկրտչյանին, Դավիթ Մինասյանին և Նժդեհ Թաշճեանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջիններիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0236/01/23 քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, որի դատական տարածքում կատարվել է ենթադրյալ հանցանքը, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0236/01/23 քրեական վարույթը փոխանցել ըստ ընդդատության (…)*»[11]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «*(…) Սույն դեպքում հարկ է փաստել, որ ՀՀ Հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ*

[10] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 201-202:
[11] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 62-68:

առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել այն պատճառաբանությամբ, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի (...) ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից:

Այսինքն՝ Դատարանը գտնում է, որ գործի քննության ընթացքում քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխությունների դեպքում վարույթները չպետք է փոխանցեն ըստ ընդդատության, քանի որ դրանք դատարանի կողմից ստանալու պահին եղել են ճիշտ ընտրված ընդդատությամբ և կանխավարկածը պետք է լինի գործի քննության շարունակությունը տվյալ դատարանում, այլ ոչ թե այն ըստ ընդդատության փոխանցելը:

Դատարանի այս դատողությունը, ի թիվս այլոց, պայմանավորված է հետևյալ հիմնավորումներով.

ա. ընդդատության կանոնները պետք է զերծ պահեն անձին դատական շրջապտույտից՝ նպաստելով գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը և արդյունավետ արդարադատության իրականացմանը,

բ. գործի ընդդատությունը որոշելը, որպես դատավարական գործողություն, որոշվում է այդ գործը ստանալու պահին գործող օրենսգրքի նորմերին համապատասխան և դատավարական նորմի հետադարձության կանոն այդ մասով նախատեսված չէ,

գ. քրեական օրենսգրքի հավելվածի փոփոխությունը համարվում է քրեական օրենքի փոփոխություն, որի վրա լիարժեքորեն տարածվում են քրեական օրենքի հետադարձության կանոնները սահմանող նորմի կարգավորումները: Այս դեպքում հարկ է արձանագրել, որ կոռուպցիոն հանցագործությունները սահմանող հավելվածի փոփոխությունը ոչ՛ մեղմացնող, ոչ՛ խստացնող օրենք է, հետևաբար դրա կիրառությունը հետադարձ կարգով անթույլատրելի է, եթե չկա համապատասխան անցումային դրույթ ընդունված օրենքում: Այլ կերպ՝ քրեական օրենքի փոփոխությունը, որով չի բարելավվում անձի վիճակը, տարածվում է այն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա,

դ. ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-

ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի նախատեսում անցումային դրույթ, ըստ որի դատարանների վարույթում գտնվող նախկին կոոուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ վարույթները պետք է փոխանցվեն ըստ ընդդատության: Դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն օրենսդրության փոփոխության նախկին դեպքերի, երբ օրենսդիրն անցումային դրույթի ուժով կարգավորել էր գործերի փոխանցումը ՀՀ հակակոոուպցիոն դատարան, այս դեպքում նման նորմ չի նախատեսել, ինչը հիմք է տալիս գալ հիմնավոր այն եզրահանգման, որ օրենսդրի կամքն եղել է հիշյալ քրեական վարույթների քննությունը գործը ստացած դատարանում մնալը: Հակառակ դեպքում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ տարբեր ժամանակներում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական գործը կհայտնվի անվերջ «շրջապտույտի» մեջ: Օրինակ՝ դատարանում ավարտական փուլում (դատական վիճաբանություններ կամ եզրափակիչ ելույթներ) գտնվող քրեական գործը զուտ օրենսդրական փոփոխություններից ելնելով առարկայական ընդդատությամբ ուղարկվի այլ դատարան, իսկ որոշ ժամանակ անց՝ նույն հիմնավորումներով վերադարձվի այն ուղարկած դատարան:

Հիմք ընդունելով վերը նշվածը դատարանը վերահաստատում է իր մոտեցումը, որ առարկայական ընդդատության ենթակա գործերի ցանկում փոփոխության դեպքում գործում է ճիշտ ընդդատությամբ գործը ստացած դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ընդունված նոր օրենքով: Նման մոտեցումը միտված է ապահովելու ընդդատության որոշման կանոնի կայունության հատկանիշը, ինչը պետք է բացառի քրեական գործերի ձևական հիմքերով «միգրացիան» դատարանների միջև:

Անդրադառնալով այն հավանական փաստարկին, ըստ որի քրեական դատավարության օրենսգիրքը թույլատրում է քրեական գործը ընդդատությամբ ուղարկել ցանկացած փուլում, արձանագրում է, որ այդ կարգավորումը վերաբերում

է միայն գործի քննության ընթացքում հայտ եկած նոր փաստերին, այլ ոչ թե օրենքի փոփոխությանը (…)»[12]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[13]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[12] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 39-58:

[13] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[14]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[15]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[14] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[15] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

12.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) **«Հոդված 296. Փողերի լվացումը»** բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (...)»:*

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (...) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (...) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն*

ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:

12.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):(...):*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»:

13. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքներն այլևս չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի և ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում, հետևաբար դրանց վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք այդ փոփոխությունը պետք է

տարածվի Հակակոռուպցիոն դատարանում դատաքննության փուլում գտնվող նմանատիպ վարույթների վրա, այլ կերպ՝ արդյո՞ք այդ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդուհանդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով անցում չի կատարվել դատաքննության փուլ, վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև: Այսինքն, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում կատարված չլինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ է:

13.1. Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև տվյալ պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում, գտնում ենք, որ Հակակոռուպցիոն դատարանների վարույթում գտնվող՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ

օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա վարույթների վերաբաշխման հարցը պետք է լուծվի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ: Այլ կերպ՝ այն վարույթները, որոնցով Հակակոռուպցիոն դատարանն անցում չի կատարել հիմնական դատալսումների փուլ, ենթակա են վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ Հայկ Լալայանին, Արման Օհանյանին, Արծրուն Մկրտչյանին, Դավիթ Մինասյանին և Նժդեհ Թաշճեանին ներկայացված մեղադրանքների համաձայն՝ վերջիններիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»* եղանակով, որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին[16]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ Հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել այն պատճառաբանությամբ, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից[17]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ««Հայաստանի

---

[16] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[17] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթը ենթակա էր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ սույն գործով Հակակոռուպցիոն դատարանն անցում չի կատարել հիմնական դատալսումների փուլ[18]:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, հիմնավոր չէ: Ընդունելի չէ նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից քրեական վարույթի ընդդատությանը վերաբերող օրենսդրական փոփոխությունները դատավարական նորմի՝ հետադարձության կարգով կիրառելու համատեքստում քննարկելը և դրա արդյունքում արված այն եզրահանգումը, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել:

17. Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Հայկ Աշոտի Լալայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արման Սեյրանի Օհանյանի վերաբերյալ ՀՀ քրեական

[18] Տե՛ս սույն որոշման 1.2-րդ կետը:

օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Արծրունի Սամվելի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Դավիթ Հրանտի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Նժդեհ Պողոսի Թաշճեանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Մուշեղ Սամվելի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի կետով 7-րդ կետով, Վարդևան Գրիգորի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Ժաննա Հմայակի Նիկողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Սերյոժա Գարեգինի Թումանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Տիգրան Արսենի Ղամբարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/0425/01/24 (ՀԿԴ/0236/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ